Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1959 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՄՆԱԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են սույն որոշման N 1 հավելվածով հաստատված միջոցառման շրջանակում սոցիալական աջակցության շահառու հանդիսացող ընտանիքների (այսուհետ՝ շահառուներ) ամենամսյա դրամական աջակցություն (այսուհետ՝ դրամական աջակցություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Դրամական աջակցությունը տրամադրում (վճարում) է ծառայությունը՝ հիմնադրամից ստացված վճարման ցուցակների հիման վրա:

3. Դրամական աջակցություն ստանալու համար շահառու ընտանիքի անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող) մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային տարբերակով դիմում է ծառայություն՝ դիմումի մեջ նշելով

1) իր և իր ընտանիքի անդամի (անդամների) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը), ազգակցական կապը).

2) հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը.

3) փաստացի (վարձակալած) բնակության վայրի հասցեն.

4) իր բանկային հաշվին կցված վճարային քարտի համարը և բանկը.

5) կացարանի վարձատուի անունը, ազգանունը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Հիմնադրամը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը դիմողների և ընտանիքի մյուս անդամների տվյալները համեմատում (համադրում) է բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և պետական եկամուտների կոմիտեի տվյալների հետ, և մերժվում (դադարեցվում) կամ հաստատվում է դրամական աջակցության տրամադրումը:

5. Դրամական աջակցության տրամադրումը մերժվում (դադարեցվում) է, եթե

1) ներկայացված տվյալները հավաստի չեն (տվյալները չեն համապատասխանում բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին).

2) մահվան պետական գրանցման վերաբերյալ տվյալներն առկա են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալներում: Ընդ որում դիմողի մահվան դեպքում ընտանիքի մյուս անդամներից մեկը կարող է խմբագրել դիմումը՝ որպես դիմող նշելով իր տվյալները: Դրամական աջակցության հաստատված դիմում ունենալու դեպքում՝ ընտանիքի անդամի մահվան հանգամանքով պայմանավորված, սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված, ընտանիքի անդամների տարիքների հանրագումարի նվազումը ընտանիքին հետագա ամիսների համար դրամական աջակցության տրամադրումը դադարեցնելու հիմք չի հանդիսանում.

3) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ անընդմեջ 90 և ավելի օր չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում: Ընդ որում, այս դեպքում՝ աջակցության տրամադրումը շարունակվում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ամսվան հաջորդող ամսվանից, եթե ընտանիքի անդամը Հայաստանի Հանրապետություն է վերադառնում բացակայության օրվանից սկսած մինչև 183-րդ օրը.

4) ընտանիքի անդամն ունի ամուսին (գրանցված ամուսնության դեպքում), որի տվյալները որպես ընտանիքի անդամ չեն նշվել դիմումում, բացառությամբ այն

դեպքերի, երբ ամուսինը դատարանի վճռի հիման վրա ճանաչվել է անհայտ բացակայող.

5) ընտանիքի անդամի համար առկա է հաստատված դիմում.

6) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ չի հաստատվել սույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետով ներկայացված անձի վարձատու լինելու հանգամանքը.

7) համաձայն սույն որոշման N 1 հավելվածի 1-ին և 2-րդ կետերի՝ ընտանիքը չի հանդիսանում միջոցառման շահառու.

8) չեն ներկայացվել սույն կարգի 3-րդ կետով նախատեսված բոլոր տվյալները.

9) ընտանիքը հրաժարվել է պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում պետական սոցիալական բնակարանային ֆոնդում կացարանով ապահովման առաջարկից: Ընդ որում մերժման (դադարեցման) այս հիմքի դեպքում՝ աջակցության տրամադրումը վերականգնման ենթակա չէ:

6. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ դրամական աջակցության տրամադրումը մերժվում (դադարեցվում) է ընտանիքի տվյալ անդամի մասով:

7. Դրամական աջակցության տրամադրումը հաստատելու կամ մերժելու (դադարեցնելու) մասին էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկվում դիմողի հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին: Էլեկտրոնային հաղորդագրությունը պարունակում է սույն կարգի 3-րդ կետում նշված տվյալները, դիմումը ներկայացնելու ամսաթիվը, իսկ դրամական աջակցության տրամադրումը մերժելու (դադարեցնելու) դեպքում՝ նաև հիմքերը:

8. Եթե աջակցության տրամադրումը չի մերժվում, ապա ամսական դրամական աջակցությունը վճարվում է՝ սկսած դիմելու հաջորդ ամսվանից՝ 120 ամիսների ընթացքում:

9. Դրամական աջակցության հաստատված դիմում ունենալու դեպքում դիմողը կարող է միայն խմբագրել դիմումը՝ փոփոխելով սույն կարգի 3-րդ կետում նշված տվյալները, բացառությամբ ընտանիքի անդամի փոփոխության:

10. Հիմնադրամը մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը ծառայությանն է տրամադրում վճարման ցուցակները, որը վճարումներն իրականացնում է վճարման ցուցակները հիմնադրամից ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Դրամական աջակցությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետով ներկայացված քարտային հաշվին փոխանցելու միջոցով:

12. Վճարման ցուցակ ներառվում են՝

1) բանկի անվանումը.

2) դիմողի անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձը հաստատող փաստաթղթի (այդ թվում՝ ժամանակավոր վկայականի) սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը), բջջային հեռախոսահամարը.

3) քարտային հաշվի համարը.

4) վճարման ենթակա գումարը:

13. Աջակցությունը բանկի կողմից վճարվում է դրամական աջակցության գումարը դիմողի քարտային հաշվին փոխանցելու միջոցով: Եթե դիմողը սխալ է նշում իր քարտային հաշվին կցված վճարային քարտի համարը, ապա բանկը վճարումն իրականացնում է դիմողի՝ ընտրված բանկի մասնաճյուղ անձամբ ներկայանալու և վերջինիս նույնականացնելու դեպքում: Ընդ որում, եթե դրամական աջակցության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում բանկին չի ներկայացվում գումարն ստանալու պահանջ, ապա գումարը բանկի կողմից վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

14. Դրամական աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց և ենթակա չէ ժառանգման:

15. Դիմողը պարտավոր է ներկայացնել հավաստի տվյալներ (փաստաթղթեր), տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել դրամական աջակցություն չվճարելուն: Սույն կետով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով դրամական աջակցության տրամադրումը մերժվում է (դադարեցվում է) և ավել վճարված դրամական

աջակցության գումարները ենթակա են հետգանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ